Հավելված N 1
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարարի
2024 թվականի հունվարի 10-ի N 29-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԻԱՑԻՈՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԵՎ ԼՈՒՐՋ ՄԻՋԱԴԵՊԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության բաժինը (այսուհետ՝ Բաժին) նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Բաժինը իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, այլ իրավական ակտերի և սույն կանոնադրության հիման վրա:

3. Բաժնի կանոնադրությունը, ներքին կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարը (այսուհետ՝ Նախարար):

2. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Բաժնի հիմնական խնդիրներն ու նպատակներն են՝

1) ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի պետական մասնագիտական քննության անցկացման կազմակերպում.

2) Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի մշտադիտարկման իրականացում.

3) Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի կանխարգելիչ միջոցառումների իրականացում.

4) Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի միջազգային կառույցների և գործընկերների հետ համագործակցություն.

5) Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության նախնական և կազմակերպչական աշխատանքների իրականացնում.

6) Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության աշխատանքներին մասնակցություն.

7) Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի հաղորդման կամավոր և ոչ պատժիչ գաղտնի համակարգի կառավարում.

8) Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության, ինչպես նաև կրթական ծրագրերի միջոցով հանրության վստահության ապահովում ավիացիոն անվտանգության նկատմամբ.

9) Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերով սահմանված օդային տրանսպորտի ոլորտին առնչվող հանձնառությունների իրականացումը.

10) Նախարարության լիազորությունների շրջանակներում և դրանց իրականացման նպատակով՝ համապատասխան տեղեկանքների, հաշվետվությունների, զեկուցագրերի և առաջարկությունների նախապատրաստումը.

11) օդային տրանսպորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված այլ գործառույթների իրականացումը:

3. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1) Իրականացնում է ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի պետական մասնագիտական քննության անցկացման կազմակերպումը.

2) Իրականացնում է ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի մշտադիտարկումը.

3) Իրականացնում է ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի կանխարգելիչ միջոցառումները.

4) Համագործակցում է ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի միջազգային կառույցների և գործընկերների հետ.

5) Իրականացնում է ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության նախնական և կազմակերպչական աշխատանքներ.

6) Մասնակցում է ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության աշխատանքներին.

7) Կառավարում է ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի հաղորդման կամավոր և ոչ պատժիչ գաղտնի համակարգը.

8) Ապահովում է ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության, ինչպես նաև կրթական ծրագրերի միջոցով հանրության վստահությունը ավիացիոն անվտանգության նկատմամբ.

9) Մշակում է Բաժնի խնդիրների և գործառույթների վերաբերյալ կարգերի ու նորմատիվային փաստաթղթերը.

10) Ապահովում է թռիչքների անվտանգությանն առնչվող տվյալների էլեկտրոնային եղանակով պահպանումը.

11) Կազմում է ավիացիոն պատահարների և միջադեպերի տարեկան հաշվետվությունը.

12) Նախապատրաստում է ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննությանն առնչվող փաստաթղթերը, դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումները և ուղեցույցերը, ինչպես նաև դրանց հաստատման վերաբերյալ առաջարկության ներկայացումը Նախարարին.

13) իրականացնում է խորհրդատվական ու մեթոդաբանական աշխատանքները անձնակազմի հետ՝ ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության գործընթացների և դրանց կիրառության մասով:

4. ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Բաժինը կառավարում է և աշխատանքները համակարգում է Նախարարը:

6. Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է բաժնի պետը:

7. Բաժնի պետը անմիջական հաշվետու է Նախարարին:

8. Բաժնի պետը՝

1) ապահովում է Բաժնի ընթացիկ գործառույթների իրականացումը.

2) Բաժնի աշխատակիցներին տալիս է ցուցումներ և հանձնարարականներ.

3) պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն Նախարարին և Գլխավոր քարտուղարին՝ Բաժնի կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի վերաբերյալ.

4) Գլխավոր քարտուղարին է ներկայացնում Բաժնի աշխատանքային ծրագրերը.

5) սահմանում է գործառույթների բաշխում Բաժնի աշխատակիցների միջև,

6) ապահովում է Նախարարի և Գլխավոր քարտուղարի հրամանների և հանձնարարականների կատարումը.

7) Բաժնի աշխատակիցներից ընդունում է իրենց կողմից կատարած աշխատանքների մասին հաշվետվությունները, քննարկում դրանց գործունեության արդյունքները.

8) ըստ անհրաժեշտության, ներկայացնում է զեկուցումներ համապատասխան մարմիններում՝ Բաժնի գործունության ոլորտներին առնչվող, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից կատարվող աշխատանքների վիճակի վերաբերյալ.

9) ներկայացնում է առաջարկություններ Նախարարին և Գլխավոր քարտուղարին Բաժնի աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցներ կիրառելու վերաբերյալ·

10) պատասխանատվություն է կրում Բաժնի կարգապահական ներքին կանոնների պահպանման, անձնակազմի մասնագիտական պատրաստության, անհրաժեշտ աշխատանքային պայմանների ապահովման համար.

11) համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ.

12) ստորագրում է Բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը,

13) Բաժնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ,

14) Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված, Նախարարի գիտությամբ, կարող է հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների և փորձագետների,

15) Նախարարի հանձնարարությամբ կատարում է քաղաքացիների ընդունելություն,

16) Նախարարի, Գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

5. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Բաժինը բաղկացած է երեք քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող աշխատողներից՝ բաժնի պետից, երկու գլխավոր մասնագետներից:

10. Գլխավոր մասնագետները՝

1) Իրականացնում են ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի պետական մասնագիտական քննության անցկացման կազմակերպման աշխատանքները.

2) Իրականացնում են ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի մշտադիտարկման գործառույթները.

3) իրականացնում են ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի կանխարգելիչ միջոցառումների ապահովումը.

4) իրականացնում են ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի միջազգային կառույցների և գործընկերների հետ համագործակցությունը.

5) իրականացնում են ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության նախնական և կազմակերպչական աշխատանքների ապահովումը.

6) իրականացնում են ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության աշխատանքներին մասնակցության ապահովումը.

7) իրականացնում են ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի հաղորդման կամավոր և ոչ պատժիչ գաղտնի համակարգի կառավարման աշխատանքները.

8) իրականացնում են ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության, ինչպես նաև կրթական ծրագրերի միջոցով հանրության վստահության ապահովումը ավիացիոն անվտանգության նկատմամբ.

9) իրականացնում են ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության կազմակերպման գործառույթները.

10) իրականացնում են Բաժնի խնդիրների և գործառույթների վերաբերյալ կարգերի ու նորմատիվային փաստաթղթերի մշակումը.

11) իրականացնում են ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննությանն առնչվող փաստաթղթերի նախապատրաստումը, դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի մշակումն ու լրամշակումը, ինչպես նաև դրանց հաստատման վերաբերյալ առաջարկության ներկայացումը Բաժնի պետին.

12) իրականացնում են թռիչքների անվտանգությանն առնչվող տվյալների էլեկտրոնային եղանակով պահպանումը.

իրականացնում են ավիացիոն պատահարների և միջադեպերի տարեկան վերլուծության ապահովումը և հաշվետվության կազմումը.

13) մասնակցում են խորհրդատվական ու մեթոդաբանական աշխատանքներին՝ ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության գործընթացների և դրանց կիրառության մասով.

14) կատարում են Բաժնի պետի այլ հանձնարարականները: